«ԱԶԱՏ ՄԱՔՍԱՅԻՆ ԳՈՏԻ», «ԱԶԱՏ ՊԱՀԵՍՏ» ՄԱՔՍԱՅԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐՈՎ ՁԵՎԱԿԵՐՊՎԱԾ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԵՎ «ԱԶԱՏ ՄԱՔՍԱՅԻՆ ԳՈՏԻ», «ԱԶԱՏ ՊԱՀԵՍՏ» ՄԱՔՍԱՅԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐՈՎ ՁԵՎԱԿԵՐՊՎԱԾ ԱՊՐԱՆՔՆԵՐԻՑ ՊԱՏՐԱՍՏՎԱԾ (ՍՏԱՑՎԱԾ) ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ՎԱՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԱՅԴՊԻՍԻ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐՄԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ՈՐՈՇՈՒՄ

2023 թվականի _____ N__-Ն

«ԱԶԱՏ ՄԱՔՍԱՅԻՆ ԳՈՏԻ», «ԱԶԱՏ ՊԱՀԵՍՏ» ՄԱՔՍԱՅԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐՈՎ ՁԵՎԱԿԵՐՊՎԱԾ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԵՎ «ԱԶԱՏ ՄԱՔՍԱՅԻՆ ԳՈՏԻ», «ԱԶԱՏ ՊԱՀԵՍՏ» ՄԱՔՍԱՅԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐՈՎ ՁԵՎԱԿԵՐՊՎԱԾ ԱՊՐԱՆՔՆԵՐԻՑ ՊԱՏՐԱՍՏՎԱԾ (ՍՏԱՑՎԱԾ) ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ՎԱՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԱՅԴՊԻՍԻ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐՄԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Մաքսային կարգավորման մասին» օրենքի 142-րդ հոդվածի 6-րդ մասին, 197-րդ հոդվածի 6-րդ մասին և 338-րդ հոդվածի 6-րդ մասին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Սահմանել «Ազատ մաքսային գոտի», «Ազատ պահեստ» մաքսային ընթացակարգերով ձևակերպված ապրանքների և «Ազատ մաքսային գոտի», «Ազատ պահեստ» մաքսային ընթացակարգերով ձևակերպված ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքների հաշվառումը վարելու կարգը, ինչպես նաև այդպիսի ապրանքների մասին մաքսային մարմին հաշվետվության ներկայացման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Հավելված

ՀՀ կառավարության «____» _____ ____
N____-Ն որոշման

ԿԱՐԳ
«ԱԶԱՏ ՄԱՔՍԱՅԻՆ ԳՈՏԻ», «ԱԶԱՏ ՊԱՀԵՍՏ» ՄԱՔՍԱՅԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐՈՎ ՁԵՎԱԿԵՐՊՎԱԾ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԵՎ «ԱԶԱՏ ՄԱՔՍԱՅԻՆ ԳՈՏԻ», «ԱԶԱՏ ՊԱՀԵՍՏ» ՄԱՔՍԱՅԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐՈՎ ՁԵՎԱԿԵՐՊՎԱԾ ԱՊՐԱՆՔՆԵՐԻՑ ՊԱՏՐԱՍՏՎԱԾ (ՍՏԱՑՎԱԾ) ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ՎԱՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԱՅԴՊԻՍԻ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐՄԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են «Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի մասին» 2017 թվականի ապրիլի 11-ի պայմանագրի առաջին հավելվածով հաստատված՝ Եվրասիական տնտեսական միության (այսուհետ՝ Միություն) մաքսային օրենսգրքով (այսուհետ՝ Օրենսգիրք) սահմանված առանձին գործառնությունների իրականացման դեպքում այդպիսի գործառնություններ իրականացնող՝ ազատ տնտեսական գոտու ռեզիդենտի կամ ազատ պահեստի տիրապետողի կողմից մաքսային մարմիններ «Ազատ մաքսային գոտի» կամ «Ազատ պահեստ» մաքսային ընթացակարգերով ձևակերպված կամ այդպիսի ապրանքներից պատրաստված (ստացված) ապրանքների հաշվառման վարման և մաքսային մարմիններ հաշվետվությունների ներկայացման հետ կապված հարաբերությունները:
2. Սույն կարգի 1-ին կետով նախատեսած գործառնությունների հաշվառումը մաքսային ընթացակարգի հայտարարատուները վարում են հաշվապահական հաշվառման մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:
3. Հայտարարատուների կողմից սույն կարգի 2-րդ կետին համապատասխան վարվող հաշվառումը պետք է ապահովի «Ազատ մաքսային գոտի» կամ «Ազատ պահեստ» մաքսային ընթացակարգերով ձևակերպված ապրանքների, դրանցից ստացված արտադրանքի, թափոնների, մնացորդների վերաբերյալ ամբողջական տեղեկությունների՝ մաքսային մարմիններին տրամադրման հնարավորությունը:
4. Հայտարարատուն «Ազատ մաքսային գոտի» կամ «Ազատ պահեստ» մաքսային ընթացակարգերով ձևակերպված ապրանքների և ազատ տնտեսական գոտում կամ ազատ պահեստում իրականացվող գործառնությունների վերաբերյալ հաշվետվություն (այսուհետ՝ հաշվետվություն) է ներկայացնում այն մաքսային մարմին, որի կողմից բաց են թողնվել այդպիսի մաքսային ընթացակարգերով ձևակերպված ապրանքները՝ այդպիսի մաքսային մարմնի կողմից համապատասխան պահանջի առկայության դեպքում՝ սույն կարգին կից ձևին համապատասխան:
5. Մաքսային մարմնի կողմից Հաշվետվությունների ներկայացման պահանջը հայտարարատուին ներկայացվում է էլեկտրոնային եղանակով կամ թղթային եղանակով:
6. Մաքսային մարմնի կողմից սույն կարգի 5-րդ կետին համապատասխան ներկայացվող պահանջի հետ մեկտեղ ներկայացվում է նաև այն հաշվետու ժամանակաշրջանը, որի համար պետք է ներկայացվեն հաշվետվությունները:
7. Հաշվետվությունները ներկայացվում են մինչև մաքսային մարմնի կողմից համապատասխան պահանջի ներկայացման օրն ընդգրկող ամսվան հաջորդող ամսվա վերջին օրացուցային օրը:
8. Հաշվետվությունները մաքսային մարմին են ներկայացվում էլեկտրոնային եղանակով՝ էլեկտրոնային թվային ստորագրությամբ վավերացված:

9. Անհաղթահարելի ուժի ազդեցության առկայության դեպքերում հաշվետվությունները կարող են մաքսային մարմին ներկայացվել թղթային ստորագրված եղանակով:
10. Սույն կարգի 8-րդ կետում նշված դեպքում, անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքների վերացումից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում մաքսային մարմինն ապահովում է թղթային եղանակով ներկայացված հաշվետվությունների մուտքագրումը էլեկտրոնային համակարգ:
11. Հաշվետվությունները սահմանված ժամկետներում չներկայացնելը կամ թերի ներկայացնելն առաջացնում է պատասխանատվություն վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:
12. Հաշվետվությունները գրանցվում են մաքսային մարմնում՝ ստանալով գրանցման հերթական համար, որը բաղկացած է մաքսային մարմնի ծածկագրից, հաշվետվության գրանցման ամսաթվից և հաշվետվության հերթական համարից:
13. Մաքսային մարմնի կողմից ազատ պահեստի տիրապետողներին հաշվետվությունների ներկայացման պահանջի դեպքում այդպիսի հաշվետվությունը կարող է չներկայացվել, եթե այդպիսի պահանջի ներկայացումից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում ազատ պահեստի տիրապետողի կողմից ապահովվում է վերջինիս կողմից կիրառվող ապրանքների հաշվառման համակարգին մաքսային մարմինների հեռահար մուտքի հնարավորությունը՝ Պետական եկամուտների կոմիտեի կողմից սահմանված կարգով:
14. Անկախ սույն կարգով նախատեսված մաքսային մարմնի պահանջի առկայությունից, «Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի մասին» 2017 թվականի ապրիլի 11-ի պայմանագրի առաջին հավելվածով հաստատված՝ Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 207-րդ հոդվածի 10-րդ կետի 1-ին, 2-րդ և 4-րդ, նույն հոդվածի 12-րդ և 13-րդ կետերով, 215-րդ հոդվածի 7-րդ և 9-րդ կետերով, Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2017 թվականի դեկտեմբերի 20-ի N88 որոշման առաջին հավելվածով հաստատված գործողությունների իրականացման դեպքում «Ազատ մաքսային գոտի» կամ «Ազատ պահեստ» մաքսային ընթացակարգերի գործողությունն ավարտելու նպատակով մաքսային մարմին են ներկայացվում սույն կարգով նախատեսված Հաշվետվությունները՝ մաքսային ընթացակարգերի գործողությունն ավարտելու նպատակով ներկայացվող դիմումի հետ մեկտեղ:
15. Օրենսգրքի 207-րդ հոդվածի 10-րդ կետի 1-ին ենթակետով և 215-րդ հոդվածի 7-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված հիմքերով «Ազատ մաքսային գոտի» կամ «Ազատ պահեստ» մաքսային ընթացակարգերի գործողությունն ավարտելու նպատակով ներկայացվող հաշվետվություններին կից նաև ներկայացվում են թափոնների հեռացման վայրերը շահագործողների կողմից թափոնների վնասազերծման, թաղման, ուտիլիզացման, ոչնչացման փաստը հաստատող փաստաթղթերը:
16. Մաքսային մարմնի պահանջի դեպքում լրացվում են հաշվետվության 1-ից 6-րդ բաժինները, իսկ 7-ից 13-րդ բաժինները լրացվում են, եթե իրականացվել են համապատասխան գործողություններ՝ հաշվետու ժամանակաշրջանում:
17. Օրենսգրքի 207-րդ հոդվածի 10-րդ կետի 1-ին ենթակետով և 215-րդ հոդվածի 7-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված հիմքերով «Ազատ մաքսային գոտի» կամ «Ազատ պահեստ» մաքսային ընթացակարգերի գործողությունն ավարտելու նպատակով լրացվում են հաշվետվության 1-ից

6-րդ բաժինները՝ հաշվետվության ներկայացման օրվան նախորդող մեկ օրացուցային տարվա ժամանակահատվածի համար, 7-րդ բաժինը, իսկ 8-ից 13-րդ բաժինները լրացվում են, եթե իրականացվել են համապատասխան գործողությունները:
18. Օրենսգրքի 207-րդ հոդվածի 10-րդ կետի 2-րդ ենթակետով և 215-րդ հոդվածի 7-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված հիմքերով «Ազատ մաքսային գոտի» կամ «Ազատ պահեստ» մաքսային ընթացակարգերի գործողությունն ավարտելու նպատակով լրացվում են հաշվետվության 1-ից 6-րդ բաժինները՝ հաշվետվության ներկայացման օրվան նախորդող մեկ օրացուցային տարվա ժամանակահատվածի համար, 8-րդ բաժինը, իսկ 7-րդ և 9-ից 13-րդ բաժինները լրացվում են, եթե իրականացվել են համապատասխան գործողությունները:
19. Օրենսգրքի 207-րդ հոդվածի 12-րդ և 13-րդ կետերով, ինչպես նաև Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2017 թվականի դեկտեմբերի 20-ի N88 որոշման առաջին հավելվածի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված հիմքերով «Ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտելու նպատակով լրացվում են հաշվետվության 1-ից 6-րդ բաժինները՝ հաշվետվության ներկայացման օրվան նախորդող մեկ օրացուցային տարվա ժամանակահատվածի համար, 10-րդ բաժինը, իսկ 7-ից և 9-րդ և 12-ից 13-րդ բաժինները լրացվում են, եթե իրականացվել են համապատասխան գործողությունները:
20. Օրենսգրքի 215-րդ հոդվածի 9-րդ կետով նախատեսված հիմքերով «Ազատ պահեստ» մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտելու նպատակով լրացվում են հաշվետվության 1-ից 6-րդ բաժինները՝ հաշվետվության ներկայացման օրվան նախորդող մեկ օրացուցային տարվա ժամանակահատվածի համար, 11-րդ բաժինը, իսկ 7-րդ և 8-րդ բաժինները լրացվում են, եթե իրականացվել են համապատասխան գործողությունները:
21. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2017 թվականի դեկտեմբերի 20-ի N88 որոշման առաջին հավելվածի 3-րդ կետով նախատեսված հիմքերով «Ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտելու նպատակով լրացվում են հաշվետվության 1-ից 6-րդ բաժինները՝ հաշվետվության ներկայացման օրվան նախորդող մեկ օրացուցային տարվա ժամանակահատվածի համար, 12-րդ բաժինը, իսկ 7-ից 10-րդ և 13-րդ բաժինները լրացվում են, եթե իրականացվել են համապատասխան գործողությունները:
22. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2017 թվականի դեկտեմբերի 20-ի N88 որոշման առաջին հավելվածի 4-րդ կետով նախատեսված հիմքերով «Ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտելու նպատակով լրացվում են հաշվետվության 1-ից 6-րդ բաժինները՝ հաշվետվության ներկայացման օրվան նախորդող մեկ օրացուցային տարվա ժամանակահատվածի համար, 13-րդ բաժինը, իսկ 7-ից 10-րդ, 12-րդ և 13-րդ բաժինները լրացվում են, եթե իրականացվել են համապատասխան գործողությունները:

ՁԵՎ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ N _____/_____/_____
«ԱԶԱՏ ՄԱՔՍԱՅԻՆ ԳՈՏԻ» ԿԱՄ «ԱԶԱՏ ՊԱՀԵՍՏ» ՄԱՔՍԱՅԻՆ
ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐՈՎ ՁԵՎԱԿԵՐՊՎԱԾ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ, ԱՅԴՊԻՍԻ ԱՊՐԱՆՔՆԵՐԻՑ

ՍՏԱՑՎԱԾ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ՝ ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԱԶԱՏ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՏՈՒՄ ԿԱՄ ԱԶԱՏ ՊԱՀԵՍՏՈՒՄ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Հայտարարատուի անվանումը, հասցեն, ՀՎՀՀ, անհատ ձեռնարկատիրոջ դեպքում՝ անունը, ազգանունը, հայրանունը, ՀՎՀՀ

---

2. Ազատ տնտեսական գոտու ռեզիդենտի կարգավիճակը հաստատող փաստաթղթի կամ ազատ պահեստի տիրապետողի ռեեստրում ներառման մասին վկայականի համարը

–

3. Տեղեկություններ հաշվետու ժամանակաշրջանի սկզբի դրությամբ «Ազատ մաքսային գոտի» կամ «Ազատ պահեստ» մաքսային ընթացակարգերով ձևակերպված ապրանքների վերաբերյալ

N	Ապրանքների անվանումները	Չափման միավորը	Քանակը	Քաշը	Մաքսային հայտարարագրի համարը
		հիմնական չափման միավորով / լրացուցիչ չափման միավորով	հիմնական չափման միավորով / լրացուցիչ չափման միավորով	համախառն / զուտ	
	1	2	3	4	5
1					
2					
…					

4. Տեղեկություններ հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում «Ազատ մաքսային գոտի» կամ «Ազատ պահեստ» մաքսային ընթացակարգերով ձևակերպված ապրանքներից ստացված ապրանքների վերաբերյալ

N	Ապրանքների անվանումներ / ԱՏԳ ԱԱ 10 նիշի մակարդակով ծածկագիրը	Քանակը	Քաշը	Ապրանքների արժեքը (ՀՀ դրամով)	Հումքի անվանումը	Քանակը	Քաշը
		հիմնական չափման միավորով / լրացուցիչ չափման միավորով	հիմնական չափման միավորով / լրացուցիչ չափման միավորով			հիմնական չափման միավորով / լրացուցիչ չափման միավորով	հիմնա չափմ միավո լրացու չափմ միավո
	1	2	3	4	5	6	7
1							
2							
…							

5. Տեղեկություններ հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում «Ազատ

մաքսային գոտի» կամ «Ազատ պահեստ» մաքսային ընթացակարգերի գործողությունն այլ մաքսային ընթացակարգերով ավարտելու վերաբերյալ.

N	Ապրանքների անվանումը	Չափման միավորը	Քանակը	Ապրանքների ԱՏԳ ԱԱ ծածկագիրը 10 նիշի մակարդակով	Ապրանքների մաքսային հայտարարագրի համարը և ապրանքի հերթական համարը մաքսային հայտարարագրում	Այլ մա ձևակ ներկ հայտ համա համա հայտ
	1	2	3	4	5	6
1						
2						
…						

6. Տեղեկություններ հաշվետու ժամանակաշրջանի ավարտի դրությամբ «Ազատ մաքսային գոտի» կամ «Ազատ պահեստ» մաքսային ընթացակարգերով ձևակերպված ապրանքների վերաբերյալ

N	Ապրանքների անվանումները	Չափման միավորը	Քանակը	Քաշը	Մաքսային հայտարարագրի համարը
		հիմնական չափման միավորով / լրացուցիչ չափման միավորով	հիմնական չափման միավորով / լրացուցիչ չափման միավորով	համախառն / զուտ	
	1	2	3	4	5
1					
2					
…					

7. Տեղեկություններ Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի 207-րդ հոդվածի 10-րդ կետի 1-ին ենթակետով և 215-րդ հոդվածի 7-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված հիմքերով մաքսային ընթացակարգերի գործողությունն ավարտելու նպատակով

N	Թափոնների նկարագիրը	Չափման միավորը	Քանակը	Թափոնների հեռացման վայրերը շահագործողներին թափոնների հանձնման թույլտվության համարը	Թափոնների հեռացման վայրերը շահագործողների կողմից թափոնների թաղման, վնասազերծման, տեղադրման, ուտիլիզացման փաստը հաստատող փաստաթղթի համարը	Թաս վայ կող վնա ուտի
	1	2	3	4	5	

1
2
...

8. Տեղեկություններ Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի 207-րդ հոդվածի 10-րդ կետի 2-րդ ենթակետով և 215-րդ հոդվածի 7-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված հիմքերով մաքսային ընթացակարգերի գործողությունն ավարտելու նպատակով

N	Ապրանքների անվանումը	Չափման միավորը	Քանակը	Ապրանքների ԱՏԳ ԱԱ ծածկագիրը 10 նիշի մակարդակով	Ապրանքների մաքսային հայտարարագրի համար և ապրանքի հերթական համարը մաքսային հայտարարագրում
	1	2	3	4	5
1					
2					
...					

9. Տեղեկություններ Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի 207-րդ հոդվածի 10-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված հիմքով մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտած ապրանքների վերաբերյալ

N	Ապրանքների անվանումը	Չափման միավորը	Քանակը	Ապրանքների ԱՏԳ ԱԱ ծածկագիրը 10 նիշի մակարդակով	Ապրանքների մաքսային հայտարարագրի համար և ապրանքի հերթական համարը մաքսային հայտարարագրում
	1	2	3	4	5
1					
2					
...					

10. Տեղեկություններ Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի 207-րդ հոդվածի 12-րդ և 13-րդ կետերով, ինչպես նաև Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2017 թվականի դեկտեմբերի 20-ի N88 որոշման առաջին հավելվածի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված հիմքերով «Ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտելու նպատակով.

N	Ապրանքների անվանումը	Չափման միավորը	Քանակը	Ապրանքների ԱՏԳ ԱԱ ծածկագիրը 10 նիշի մակարդակով	Ապրանքների մաքսային հայտարարագրի համարը և ապրանքի հերթական համարը	Սարքավորումների շահագործման կա անշարժ գույքի կառուցման (ստեղ նորոգման կամ օրենսդրությամբ սահմանված այլ

				մաքսային հայտարարագրում	գործողությունների իրականացման հա սպառված քանակ
1	2	3	4	5	6
1					
2					
...					

11. Տեղեկություններ Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի 215-րդ հոդվածի 9-րդ կետով նախատեսված հիմքերով «Ազատ պահեստ» մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտելու նպատակով.

N	Ապրանքների անվանումը	Չափման միավորը	Քանակը	Ապրանքների ԱՏԳ ԱԱ ծածկագիրը 10 նիշի մակարդակով	Ապրանքների մաքսային հայտարարագրի համարը և ապրանքի հերթական համարը մաքսային հայտարարագրում	Սարքավորումների շահագործման կա անշարժ գույքի կառուցման (ստեղ համար սպառված քանակությունը
1	2	3	4	5	6	
1						
2						
...						

12. Տեղեկություններ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2017 թվականի դեկտեմբերի 20-ի N88 որոշման առաջին հավելվածի 3-րդ կետով նախատեսված հիմքերով «Ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտելու նպատակով.

N	Ապրանքների անվանումը	Չափման միավորը	Քանակը	Ապրանքների ԱՏԳ ԱԱ ծածկագիրը 10 նիշի մակարդակով	Ապրանքների մաքսային հայտարարագրի համարը և ապրանքի հերթական համարը մաքսային հայտարարագրում	Մեքենաների կամ սարքավորումների անվանումը / մաքս հայտարարագրի գրանցման համար ապրանքի հերթակ համարը մաքսային հայտարարագրու
1	2	3	4	5	6	
1						
2						
...						

13. Տեղեկություններ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2017 թվականի դեկտեմբերի 20-ի N88 որոշման առաջին հավելվածի 4-րդ կետով նախատեսված հիմքերով «Ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգի գործողությունն ավարտելու նպատակով.

N	Ապրանքների անվանումը	Չափման միավորը	Քանակը	Ապրանքների ԱՏԳ ԱԱ ծածկագիրը 10 նիշի մակարդակով	Ապրանքների մաքսային հայտարարագրի համարը և ապրանքի հերթական համարը մաքսային հայտարարագրում	Իրականացված փ փորձարկումների, հետազոտությունն ստուգումների նկարագիրը
	1	2	3	4	5	6
1						
2						
…						

Հայտարարատուի (լիազորված անձի)՝

_____ _____

(անվանում) (ստորագրություն)